

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
պրն. Ա. Ջավադյանին

Հարգելի պարոն Ջավադյան

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ-ի դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշման 50-րդ մասի 10-րդ կետի Ձեզ եմ ներկայացնում «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը, որը նաև տեղադրված է նաև մեր պաշտոնական կայքում (կցվում է առդիր 1 թերթ):

Գործադիր տնօրեն

Պապ Բադալյան

25.02.11թ.

Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008թ-ի դեկտեմբերի 30-ի թիվ 373-Ն որոշման 50-րդ մասի 10-րդ կետի պահանջի, բացահայտում եմ «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ին վերաբերող հետևյալ էական տեղեկությունը՝

1. «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ն 2011թ-ի փետրվարի 01-ի և փետրվարի 22-ին տեղի ունեցած բաժնետերերի արտահերթ ժողովների ընթացքում որոշել են Ամերիաբանկ ՓԲԸ-ից վերցնել 500.0 հազարական ԱՄՆ դոլար վարկային գծեր՝ ընդամենը 1.0 մլն ԱՄՆ դոլար: Վարկային գծերի մի մասը օգտագործվել է և օգտագործվելու է, մատակարարներից ձեռքբերվելիք հումքերի կանխավճարներ և պարտքերի մարումներ կատարելու համար: Վերջինս պայմանավորված է ոչ թե ֆինանսական վիճակի վատացման, այլ Ընկերության շինարարական արտադրանքի իրացման սեզոնայնության հետ: Մյուս պատճառն այն է, որ Ընկերությունը ցանկանում է սեզոնի բացման ժամանակ պատրաստ լինել հումքի անրաժեշտ քանակով, ինչպես նաև ձմռան ամիսներին Ընկերությունը շարունակում է ձեռք բերել հիմնական միջոցներ և կատարել կապիտալ ներդրումներ՝ մասնավորապես կավիճի արտադրամասի վերջնական գործարկման համար ձեռք է բերում 100.0 հազ Եվրո արժողության սեպարատոր:

2. «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի 100% դուստր «Շեն Գրուպ» ՓԲԸ-ն «Հանքաման Բիդլինգ Փրոդաքթս» ՍՊԸ-ի 80% բաժնեմասի ձեռքբերման նախնական 29.12.10թ-ի պայմանագրից հետո 23.02.11թ-ին կնքել է բաժնեմասի վերջնական ձեռքբերման պայմանագիր:

3. «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ բաժնետերերի արտահերթ ժողովով կատարվել է արտաքին աուդիտի ընտրության մրցույթ, որի համաձայն 2010թ-ի արտաքին աուդիտոր է ընտրվել ԹՄ Աուդիտ ՓԲԸ-ն: